



Մարտի 11-ից 15-ը Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքի երիտասարդական կենտրոնում կայացավ «Youth Work Policy in Europe: It's Up to Us!» ուսումնական ծրագիրը, որը կազմակերպվել էր Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնության (European Confederation of Youth Club - ECYC) և Եվրախորհրդի երիտասարդական բաժնի (Youth Department of Council of Europe) կողմից:

Նպատակը երիտասարդական աշխատանքի քաղաքականության և Եվրոպայի Խորհրդի կողմից մշակված «Երիտասարդական աշխատանքի մասին» Հանձնարարականի (Youth Work Recommendation (CM/Rec(2017)4) <https://rm.coe.int/1680717e78>) մասին հանրային իրազեկվածության բարձրացումն էր և դրա օգտագործման խթանումը երիտասարդական քաղաքականության առաջխաղացման գործում:

Ծրագրի արդյունքում մասնակիցները կազմել են իրենց երկրներում և կազմակերպություններում երիտասարդական աշխատանքի առաջխաղացման և ջատագովության գործողությունների պլան: Հանձնարարականի հայերեն թարգմանությունը հայաստանցի մասնակիցների Գործողությունների պլանի առաջնահերթ կատարվելիք գործերից էր: Հանձնարարականը պարունակում է յոթ հիմնական աճաջարկներ, որոնց ոչ պաշտոնական հայերեն թարգմանությունը կարող էք ծանոթանալ ստորև:

Հանձնարարվում է, որ անդամ պետությունների կառավարությունները, իրենց իրավասության շրջանակում, կրկին վերանայեն իրենց աջակցությունը երիտասարդական աշխատանքի վերաբերյալ հետևյալ կերպ.

1. Համոզվել, որ որակյալ երիտասարդական աշխատանքի ստեղծումը կամ հետագա զարգացումը ապահովված է և ակտիվորեն աջակցություն է ստանում տեղական, տարածաշրջանային կամ ազգային երիտասարդական քաղաքականությունների շրջանակներում: Հաշվի առնելով երիտասարդական աշխատանքի բազմազանությունը անդամ պետություններում՝ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ռազմավարության, կառուցվածքների, օրենսդրության, կայուն կառույցների և ռեսուրսների կարիքներին, արդյունավետ համագործակցությանն այլ ոլորտների, ինչպես նաև առնչություն ունեցող այլ քաղաքականությունների հետ, որոնք առաջխաղացում են բոլոր



երիտասարդների հավասար հասանելիությունը երիտասարդական աշխատանքին: Երիտասարդական աշխատողները և երիտասարդները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն ցանկացած պլանավորված միջոցառումներին՝ Հանձնարարականի իրականացման համար:

2. Մտեղծել համաձայնեցված և ճկուն՝ ունակությունների վրա հիմնված շրջանակ վճարվող և կամավոր երիտասարդական աշխատողների կրթության ու վերապատրաստման համար, որը հաշվի կառնի առկա փորձը, նոր միտումները և հարթակները, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի բազմազանությունը: Շահառուները, ներառյալ երիտասարդության աշխատողները և երիտասարդները պետք է ներգրավվեն այս շրջանակի զարգացման մեջ:
3. Հաշվի առնել այս Հանձնարարականի հավելվածում առաջարկվող միջոցները և սկզբունքները, և խրախուսել երիտասարդական աշխատանքի մատակարարներին վարվել նույն կերպ:
4. Աջակցել Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի նախաձեռնությանը Եվրոպայում երիտասարդական աշխատանքի ոլորտում ներառված շահագրգիռ կողմերի հատուկ այս դեպքի համար բարձր մակարդակի աշխատանքային խմբի ստեղծմանը, որը կարող է մշակել եվրոպական երիտասարդական աշխատանքի գիտելիքների վրա հիմնված միջնաժամկետ ռազմավարություն, որպեսզի՝
 - բարելավվի եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում երիտասարդական աշխատանքի գիտելիքների և ռեսուրսների համակարգումը և նրանց հասանելիությունը,
 - լրացուցիչ աջակցել երիտասարդական աշխատանքի փորձի փոխանակումը, փոխուսուցումը և կայուն ցանցերի ու գործընկերությունների ստեղծմանը,
 - խթանել համագործակցությունը երիտասարդական դաշտում և բոլոր այն ոլորտներում, որտեղ երիտասարդական աշխատանք է տեղի ունենում ամրապնդելու կապերը, մասնավորապես ֆորմալ կրթության և երիտասարդական աշխատանքի և հանրային մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև,



- ամրապնդել երկխոսությունը երիտասարդական աշխատանքի, երիտասարդական քաղաքականության և երիտասարդական հետազոտությունների միջև,
- ամրապնդել երիտասարդական աշխատանքի կարողությունը՝ արձագանքելու մեր հասարակության փոփոխություններին և միտումներին, երիտասարդների առջև կանգնած մարտահրավերներին,
- վճարովի և կամավոր երիտասարդական աշխատողների համար իրականացնել քարտեզագրման աշխատանքներ գործող կրթական և վերապատրաստման ոլորտների (օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում ու բարձրագույն կրթություն) և գոյություն ունեցող ունակությունների վավերացման համակարգերի վերաբերյալ,
- Մշակել մի շարք օժանդակ միջոցներ՝ աջակցելու անդամ պետություններին նախաձեռնել և իրականացնել այս հանձնարարականները:

5. Խթանել երիտասարդական աշխատանքի տարբեր տեսակների և դրանց արժեքների, ազդեցության և արժանիքների վերաբերյալ ազգային ու եվրոպական հետազոտությունների իրականացմանը:

6. Աջակցել երիտասարդական աշխատանքի ազդեցության և արդյունքների վերանայման ու գնահատման համապատասխան ձևերի զարգացմանը, և ուժեղացնելով անդամ պետություններում Եվրոպայի խորհրդի Երիտասարդական Աշխատանքի Պորտֆոլիոյի տարածումը, ճանաչումը և ազդեցությունը:

7. Առաջխաղացնել Եվրոպայի խորհրդի Quality Label for Youth Centres-ը (Երիտասարդական Կենտրոնների Որակական Պիտակ)՝ որպես լավագույն փորձի օրինակ:

Բացի այդ առաջարկվում է, որ անդամ պետությունների կառավարությունները՝

- ապահովեն, որ այս հանձնարարականը, ներառյալ դրա հավելվածը, թարգմանվի և տարածվի (հասանելի ձևաչափերով) համապատասխան մարմինների և շահագրգիռ կողմերի շրջանում՝ նպատակ ունենալով բարձրացնել որակյալ երիտասարդական աշխատանքի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը:

- հետևել Նախարարների խորհուրդի միջոցով, որ ապահովվի Հանձնարարականի իրականացումը փաստաթղթի ընդունվելուց հինգ տարի անց: